

ներից: Դպրոցի դիրքը շենքը և շրջակայրի ճամպամանքները, իւրաքանչյուր դասասնեալի յարմարութիւնը կամ անյարմարութիւնը, մէջի պարագաները, կամ կարասիքը, ուսման օժանդակիչ միջոցները, օրինակ դասագիրքը, աշխարհագրական քարտեզները, բնապատմական ժողովածուներն ու զործներն եւ այլն աշակերտներից ըստ պարդացման եւ ըստ ճասակի, դասակցական խմբեր կազմելը, դասաւանդելի առարկաների ընդհանուր նախադիմը, եւ դասերի բաշխումն, դասերի սկսվելու, շարունակութեան եւ վերջանալու ժամանակը ուսուցիչների կողմից լինելի անհրաժեշտ կարդապահական պայմանները, աշակերտների եւ ուսուցիչների կանոնաւոր երթեւեկութիւնը կամ դասերին ներկայ լինելը • նախորոշ կարգապահական կանոնների ճիշտ զործագրութիւնը անա սոքա են զպրոցի արտաքին պայմանները: Ինչ կվերաբերվի դպրոցի ներքին բարեկարգութեան՝ դա կախված է ուսուցիչ մտաւոր գարգացութից, բարեխզնութենից ու դասաւանդական տաղանդից կամ ճարտարութենից: Ներքին բարեկարգութիւնը կախված է նմանապէս ուսուցիչների միմեանց հետ եւ դէպի աշակերտներն եւ աշակերտների ծնողներն ունեցած բարեկամական եւ մարդասիրական յարաբերութիւններից:

Նայելով թէ վերոյիշված հանդամանքները նորագոյն մանկավարժական պայմաններին որ աստիճանով են համապատասխան, նոյն աստիճանով եւս հասարակութիւնը կարող է արդիւնք սպասել իւր դպրոցներից:

Դպրոցից դուրս աշակերտի մասաւոր եւ բարոյական գարգացման վերայ, անշուշտ ամենամեծ ազգեցութիւն ունի ընտանեկան ։ Եւ հասարակական կեանքը. ցաւալի սրտով պէտքէ խստովանենք որ ոչ մեր դպրոցների արտաքին եւ ոչ եւս ներքին բարեկարգութիւններն են համապատասխան արդի մանկավարժական պահանջներին եւ ոչ եւս մեր ընտանեկան եւ հասարակական կեանքն է կրթիչ եւ զարգացուցիչ:

Այս իսկ է պատճառը, որ մեր մանուկներին կարողանումներ մի որ եւ իցէ բան սովորեցնել, բայց չենք կարողանում զարգացնել եւ կրթել: Այսու ամենայնիւ լաւ է կարելութեան չափ կրթված ու զարգացած լինել բան թէ բոլորովին անկիրթ եւ չզարդացած:

Ս. Բ.

### ՀԵՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԱՒԵՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՔՆՆՈՒԹԻՒՆԸ: (Արարատ: № 7):

(Վերջ):

Հայերը մինչեւ այժմ ևս Այրարատեան նահանգի մասում կբնակեն, Դարսաւայից մինչեւ Կառնիսայ և Ակմանգան Երասխի վերին հոսանքի երկու ափերի ուղղութեամբ: Բնակիչները կաւելանան, և Հայերը կսկսեն զգալ իւրեանց Drang nach Osten, (արշաւանք դէպի Արևելք) որտեղ այդ ժամանակը Մարաստանին հպատակող անցայտ ցեղերը կբնակեն: Հասկանալի է որ Հայերը պիտի նուաճէին Երասխի վերայ դէպի արևելք դանշած Երկիրները: Տարեգիրը կասէ: թէ Ամասիայի որդին ժառանք, 14) Գեղամ կերթայ դէպի արևելք և Գողջայ լծի մօտ բնակութիւն կհաս-

տառեւ: Բոլոր այս բնակութիւնները, լքերը, սարերը կանուանվին նորա անունով, քաղաք Գեղամի, լիձ և գիւղ Գեղարքունի, սարեր (Ակ-գաղ) Գեղ: Բոլոր այս անունները՝ հայկական լեզուի յատկութեան համաձայն պիտի զրված լինին, գէլամի, գէլաւանի, գէլ, այնպէս որ, նոցա մէջ կարծես թէ պահպանված է Գեղ ժաղովրդի յիշատակը, որոնց Հայերը քշեցին Կասպեան ծովի մօտ: որտեղ նոցա բնակած նահանգը մինչև այժմ նոցա տուած գէլան անուն կիրէ: գէլամի քաղաքը շուտով, անյայտ պատճառներով, գառակ անուանվեցաւ, որի անունը մինչ այժմ ևս պահպանված է Գառնի-չափի գետի անունի մէջ: Այս կասէ տարեզիրը, նորանից յառաջացաւ, որ Գեղամի թոռը 21) Գառնիկ, իւր պապի շինած քաղաքին իւր անունը տուած:

«Գեղամը լջի մօտ եղած միջոցին, ծնաւ երկրորդ որդի 19) Սիսակ, այր ոէզ և անձնեայ, բարեգեզ, կորովաբան և գեղեցկաղեղն» որին Հայրը լջից գէպի արեւելք եղած (նորան չպատկանած) երկիրները կտայ մինչ այն տեղը, ուր Երասմուր իւրեան Ճնշող ժայռերը զղբգմամբ պատառելով կանցնէ հովտի մէջով: Այս նահանգը Սիսակն իւր անունով Սիւնիք, կանուանէ: Բանն այն է, որ ոչ թէ Սիսակ այս նահանգին իւր անունը կտայ, այլ ինքն այս նահանգի անունի անձնաւորումն է: որը հայերին և Պարսիկներին Սիսակն անունով էր յայտնի:»

Ականեաց նախարարութիւնը, Սիսակն կամ երբեմն, սահմանափակ բուն Սիւնիքի նշանակութեամբ, երբեմն ևս ընդարձակված մերձակայ նահանգներով, Գոզչայ լջի հարաւ—արեւելեան կողմ կոտնվէր: Երեմուաբից սահման էր Այրարատեան նահանգը, հարաւից—Երասմուի հոսանքը: Հիւսիսից երբեմն նա կտարածվէր մինչև Գանձակ, Գարալագետզի լեռնաշղթայն, ևս մասամբ նորա արեւելեան սահման կկաղմէ և մասամբ ևս կմանէ նորա մէջ: Ականէ զրեթէ բոլոր միջնադարեան ժամանակում յայտնի էր իրեւ մի առանձին նախարարութիւն, երբեմն անկախ և երբեմն ևս զրացի ազգերից կախումն ունեցող Կոստանդին Ծիրանածին (Do Caerem. aul. byz. հ. I, եր. 327) Սիւնեաց իշխանին կանուանէ Արխօնաւու Սիւնիս (Սիւնիքի պետ): Ակերը Սիւնիքի իշխանների կալուածները անցան առ ժամանակ Օրբելեան իշխաններին:

Քալով Ականէ և Սիսակն ճեկրին, կկարծեն որ սկզբում՝ արմատը Սէ և Սիս (ցեղի անունը ?) եղած լինի: «անէ և ան» (վերջինս նաև պարսկականի մէջ) աւելացած որոշ մասնիկներն են, որոնք կդատնվին յայտնի նախարարական ցեղերի և անցերի \*): Նզակի թուի մէջ «անէ զործկածզի սեռի համար, իսկ յոդնականի մէջ «անէ+—այս սեռի կալուածներ նշանակելու համար: Ազգաւունիք, Աշտունիք, Խորիսունիք, Ամատունիք, Արշակունիք:»

(\*) Կամ եւ ական առանձին վերջաւորութիւնները սաւացուկան ածականներ կկազմեն: նորա շատ անդամ կատնվին տեղերի յատուկ անունների մէջ: Տերունական (բերդ), Վասպուրական (մեծ նահանգ), Յշտիկան եւայլը:

Գնունի եղյլն՝ Վալով Այս արմատին պէտքէ նկատել, որ Սիւնեաց նախարարութեան մէջ կար նոյնոգէս Սէսէն տեղ, Աէսէն և Սէսէն ձեհրի կազմակերպութեան համեմատ կարող ենք դնել երկու միմանց մօտ բայց պարսկական և հայկական առանձին նահանգների անուններ, որոնք միւնայն բառի արմատից են կազմված բայց զանազան մասնիկներով ունեն — Առըդուռունիւն և Առըդուռունիւն։ Լահարդ Gesam. Abhandl. 155) Սիսականն անունի մէջ առէր կկարծէ, ուստի կինթազրէ միայն Աէ արմատ որից Աէ — սանիւն և Աէ — սանիւն կազմված է, այսինքն Աէ (նահանգ) առէրք (աղզի), Այս պատճառով նա Ստրաբոնի (528) Սակասինիի փոխանակ Սիսականի կկարծոյ, թէև նա ուշք պիտի զարձնէր այն բանին, թէ Խորենացուն առգրած աշխարհագրութեան մէջ Ծակաչէն նահանգ կդանիլի, Ելսոպէս Սիւնեաց կամ Սիսական նահանգը եռանկիւնի հարաւ—արեմանեան այն մասն է, որը կեզմվի Կուրի և Երասխի հոսանքներից մինչև Կոստանդնուպոլ Զաւատարի մօտ և այն գծով, որ կանցնի Կուրից մինչև Երասխը (մօտաւորապէս Վանիչայի մօտ) Գոզայ լճից զէպի արևելուոր Հիւսիս—արևելեան մնացած մասը, որի մէջ կդանիլին, Առքէ, Աքսէնի և Փայտակարան նահանգներ, կանուանիլիք Հայկական Ալբանիա, Հայերի մէջ — Ադսունիւն, իսկ պարսիկների մէջ — Առան, Հին Ալբանիան, (Ծեկի Ծիրզան) ինչպէս յայտնի է, կդանիլիք Կուրից զէպի Հիւսիս մինչև Կորտ Դասպեան ծով Բափվելը, Քրիստոսի ծննդից առաջ Բ — Գ գարերում, Աղուանները, Հիւսիսային աղգերի յարձակմանից Ճնշված, անցան մասամբ Կուրի աջակողմեան ափը, և այնանց վերդյիշված երեք նահանգից կազմեցին հայկական Ալբանիա այսինքն Աղուանը։

Իոյն ինքն Աղուանք բառը Ալբանիա բառի ուղիղ արտագրութիւն է, և տոտի շ և ու (վ) տառի շրմնացին (բ պ) դառնալը հայկական լիզուի մէջ չափազանց սոլորտական երեսյմ է, Գործնականապէս հաստատելու համար յառաջ բերենք երկու օրինակ, որոնց մէջ հայկական ձեհրը յառաջցած լինին վերև ասված օրէնքի հիմամբ, Խաղարների կամ Բուլղարների առաջնորդի անունը, որը Յուստինիանոս Բինօտմէտին գահ էր բարձրացրած յունական մատենագիրների մէջ Տէրբէլիս է, իսկ Հայերի մէջ — Տուէգ. (Տրվէգ), (Տիս Խալիֆ. պատմ. ուսւ Բարդ, եր, 11. 137), հայկական աղուես (աղզէս) բառը շատ հեշտ կարելի է իմանալ յաւնական աղուէրուի մէջ միւնայն օրէնքի հիմամբ, Հետեարար Աղուանք անունը Ալբանիա անունի ուղիղ արտագրութիւն է և ամենենին հայկական բառ չէ։

Հայերը Ալբանատեան նահանգից զէպի արևելք ուղեարելով պէտքէ բռնէին մեր վերև նկարագրած եռանկիւնը, որ կրովանզակէր իւր մէջ Սիւնեաց կամ Սիսական, և Աղուանների (պարսկերէն Առան) նախարարութիւնները, Խորենացին ինչպէս կհաղորդէ արդեօք Հայերի զէպի արևելք գաղթելու զէպը, Տարեգիրը կասէ. «Գեղամ իւր Սիսակ որդուն տուաւ Երասխից զէպի արևելք եղած երկիրը մինչև այն տեղը, ուր Եր-

բասիրը ճեղքելով սարերը գլողմամբ դռւրս կցայ հովիտ։ Նորա անունով երկիրն ևս անուանվեցաւ Սիւնիք կամ Սիսական։ Ակներե է, որ Հայերը կրաւականային առ ժամանակ եռանկիւնի միայն այս մասին տիրելով։ Բայց սպասելու էր որ շուտ մնացած մասն ևս մրանոյ հայկական հողերին։ Այսպէս և եղաւ։

Ռւստի Խորենացին ուրիշ տեղում կասէ (զիրք Բ. զԼ. թ.)։ «Աւազարշակը հիւսիս—արեւելեան կողմ Առորի հօլուում եղած երկրի կառավարուիչ նշանակեց Սիսակի սերունդներից մէկին։ Առանին (երկրի պարսկական անունի բացատրութիւն)։ Այս առանը \* ) իւր քաջցր բարբի համար Ազու կանուանվէր։ որից և երկիրը Ազուանք անուանվեցաւ (երկրի հայկական անունի բացատրութիւն է)։ Այսպէսով, թէ Սիսակ և թէ Առան կերեին ոչ թէ անձնաւորութիւնն այլ միոյն յայտնի տեղերի առնունների վիպանուններն։ Կուրի միւս կողմը Ծեկում և Ծիրվանում հայկական բնակութիւն երկար չկարողացաւ մնալ։ Այս նահանգները շատ անգամ ենթարկվեցան յարձակմունքին և չկարողացան նոցա մէջ երկար ժամանակ հաստատվել։ Կուրի և Երասխի մէջ եղած երկիրները, որոնց Հայերը բռնած էին, և նոցա գաղթումն դէպի արեւելք, արգելքին կհանդիպին։ Մի կողմից Ալբանիայի բնակիչները, միւս կողմից Մարտանցիներ նոցա առաջը կկտրեն։ Այսու ամենապյնիւ բնակիչներ կաւելունան և Հայեր կնեղվին Կուրի և Արաքսի մէջ իւրեանց հողերում կինաւու։ Ակներե է, որ Հայերի համար շուտով պիտի սկսվէր զրացիների գէմ աւելի խիստ յարձակվելու շրջանը։ որ կարողանային գտնել նոր երկիրներ բնակելու համար և մասամբ ևս կողոպտելու և աշխարհակալելու համար։ Մինչեւ այժմն Հայերը գործ ունեին մանր ազգերի հետ որոնց անունները մինչեւ անզամ պատմութեան մէջ չեն պահպանված։ Բայց այս ժամանակից սկսված նոքա պիտի կռուէին հզօր զրացի ազգերի հետ, որոնք թագաւորութիւն ունեին, ինչպէս որ յետոյ պիտի տեսնենք։

Գեղամ ինչպէս և բոլոր նախահայրեր, վերագառնալով Արմաւիր, կմեռնի, թողնելով իւր 18) Հարմայ որդուն իշխանութիւն և հայրենական կալուածներ։ Հարմայի մասին տարեգիրը ոչինչ չէ ասում։ բայց այն թամանակից սկսված նոքա պիտի կռուէին հզօր զրացի ազգերի հետ, որոնք թագաւորութիւն ունեին, Ակներե է, որ Հարմայով կվերջանայ վիպասանական պատ-

(\*) Խորենացու մէջ, յայտնի չէ, թէ որի՞ն է վերաբերվում հետեւեալ պորբերութիւնը. Առանին թէ Արամին. բայց սորանավ պատմուկան միորը չէ փախում։ Հետպետոյ մատենագիրներն այս մականունը Առանին կվերաբերեն։

մութիւնների այն շրջանը որը մենք Արմենակի մասին եղած պատմութիւնների շրջան անուանեցինք։

Հետեւեալ թագաւորութեան նկարագրութիւնը. քաղած է Մար—Արամ ոչ թէ այն զրբից, «որը Աղէքսանդրի հրամանով Քաղղիերէնից յունարէն էր թարգմանված», այլ միւս աղբիւրներից, Կասկած չկայ որ Արամի և նորա փառաւոր թագաւորութեան մասին, որն անցաւ աշխարհակալութիւններով և Հայերի իշխանութիւնը ամուր հաստատելով Երասխից դէպի հարաւ, Փոքր Ասիսյում, Մարաստանում և Ասորեստանում՝ ժողովրդական երգերի մէջ շատ կերգէին, որևէ կերեի նոյն ինքն Մար—Արամի խօսքերից (XIV): «Արամի մասին եղած պատմածները չեն գտնվում թագաւորական մատեաններում»: բայց նոքա ժողովված են անշան երգիներից և զրված են թագաւորական զիւաններում»: Հետեւաբար Հայէն սեւուներէց հոչակաւոր Արամի մասին աւանցութիւններ մի առանձին վիոլասանական պատմածների շրջան կկազմեն, որոնք Խորենացուց աւելի վաղ յայտնի են, և պահպանած են, ինչպէս կթուի: Արամի սերունդ Արամազնեայ կոչվող մարդիկը (Գիրք Ա. զլ. Զ.)։ «Արամի մասին Խորենացին կասէ (զլ. ԺԲ)»—Արամայ բազում գործք քաջութեան պատմին մարտիք նահատակութեան, և ընդարձակեալ զսահմանս Հայոց յամինայն կողմանց. յորոյ անուն և ամենայն ազգք զաշխարհս մեր անուաննեն, որպէս Յայնք Արմէն, և Պարսիկք և Ասորիք Արմիք: Բայց զննդարձակութիւն պատմութեան սորա և զգործս քաջութեան, թէ զիարդ կամ որով ժամանակաւ, թէ կամիցիս արտաքոյ այսորիկ զրոցս կարգեսուք, և կամ թողցուք, ապա թէ ոչ ի սմին»: Ի՞նչի Խորենացին կառաջարկէ թողնել Արամի մասին եղած պատմութիւնը, որ Հայկազեաններից ամենահոչակաւոր և ամենասիրելի ազգային զիւցազն էր, և միայն կկամենայ ասհմանափակել երկու խօսքով, թէ «նա շատ քաջութիւններ արաւ, մինչեւ Հայէի և նորա քաջութիւնների մասին աւելի մանրամասն կիսուի: Պարզ է, որ նոյն ինքն աղբիւրները նորա աչքին կասկածելի կերեւէին: Երգերն այն չեն, ինչ որ մի տեսակ հեղինակութիւն ունեցող զրաւոր յիշատակարաններ: Միւս թագաւորների մասին մինչեւ Արամը կիսուվի քաշզիերէնից յունարէն թարգմանված զրբում, իսկ Արամի մասին—աննշան գուսանականներից ժողովված երգերի և նորա ժամանակ եղած ժողովրդական երգերի մէջ: Այս հիմամբ մենք վստահացանք ենթագրել որ Արամի մասին եղած առելեկութիւնները քաղած է Խորենացին կամ նորա նախորդը ուրիշ աղբիւրներից, որը մենք Արամի մասին պատմածների շրջանը անուանեցինք: Մենք աւելի կհիմնվենք այս կարծիքի վերայ, որովհետեւ Սերէսսի մէջ միայն Արամի անունը կյիշվի, իսկ նորա քաջութիւնների մասին ոչինչ չէ ասվում:

Այսու ամենայնիւ Խորենացին մի քանի խօսք կասէ Արամի մասին: Երկու փոքրիկ դլուխների մէջ նա կրացատրէ ժողովրդական երգերի բոլոն-Քակութեան կմախքներ, կարծիկով իւր սովորութեան համաձայն որ նա

վիազանական պատմութենից կրագէ պատմական հիմքը։ Այս զլուիների բազմանգակութիւնը հետևեալ է, Հայաստանի սահմանները ի վաղուց հետէ ենթարկված եին օտարների յարձակմանը երեք կողմից։ Մարտանից, Ասորեստանից և Փոքր Ասիսյից։ Հայերի հին երկիրները օտար ազգերի իշխանութեան տակ ընկան։ Արամի կեանքի խնդիրն էր ազատել այդ երկիրները և ընդարձակել Հայաստանը դրացի երկիրների կողմից։ Մենք արգեն առացինք, որ Արամի բնչպէս որ Խորենացին կներկայացնէ, ոչ թէ պատմական անձն է, այլ առասպելեալ։ Ազգը իւրեան էր ձեւակերպում նորա մէջ, իսկ նորու քաջութիւնների մէջ—իւր յաջող աշխարհակալութիւններ և Հայաստանի սահմանների ընդարձակում այն շրջանում, երբ նու նեղպած էր Հայաստանի բռւն սեփական երկիրներում։ Թէ ի՞նչ ժամանակ կլինէին այդ պատերազմները, մենք ճշտութեամբ չենք կարող որոշել։ Քայլ հաւաստի է, որ նորա մի թագաւորութեան և մի անձնաւորութեան գործ չէին։ Փողովքական յիշութիւններ մէջ մուժ յիշատակութիւններ մնացին այն մասին թէ պատերազմներ կլինէին այն գարում։ Երբ Հայաստանի մեծ մասը Մարտանին, Ասորեստանին և Փոքր Ասիայի մի ազգին կպատկանէր։ Եթէ ի նկատի ունենանք, որ մի կողմից Մարտանի գարում սկսաւ իւր գոյութիւնից գաղարել, իսկ Ասորեստանիր—Քրիստոսի ծննդից առաջ է։ գարում, և միւս կողմից ասորեստանէկան թագաւորների Փ., զարից սկսած Ուրարտցիների հիմա մզած անդադար պատերազմների մասին ասորեստանէկան յիշատակարանների տեղեկութիւնները, մենք կարող ենք մերձաւորակէս որոշել ժամանակը Փ. Փ. գործ երի, իրեւ մի շրջան։ Երբ Հայերը կարողացան իւրեանց սահմանները ընդարձակել Հաստատուն բնակութիւն հաստատել այն տեղերում, որոնք եւ զարից սկսած մինչեւ մեր ժամանակը Հայաստան կանուանին։

Կենչպէս որ Հայէի պատմութեան մէջ մենք հանդիպեցանք Բարելնի կարծեցեալ Բէլ թագաւորի հետ, նոյնպէս և Արամի պատմութեան մէջ մենք զործ ունինք Ասորեստանի առաջին թագաւոր Նիսուէ հետ, Ներկայումն նինոսին ոչ ոք պատմական անձն չէ համարում։ Նիսուը նինուէ քաղաքի վիազանուն և բոլոր այն աշխարհակալութիւնների անձնաւորումն է, որոնցով Ասորեստանցիներ կհոչակվէին իւրեանց պատմական կեանքում։ Եթէ ոչ նոյն ինքն Ասորեստանցիների աւանդութիւնների մէջ, գուէ նախ Ասիայի միւս ազգերի աւանդութիւնների մէջ (Կտէղիոսից սկըսած) նիսուը բացի Բակտրիայից և Հնդկաստանից նուաճեց այն ժամանակի բոլոր յայտնի երկիրները։ Բոլորը, ինչոր Ասորեստանցիներ իւրեանց թագաւորական կեանքի Զ. և Ե. գարերի ընթացքում արած էին, կվերագրէին նինոսին և նորա կնոջ Շամիրամին։ Աստան այս աւանդութիւնների մէջ Ասորեստանի յետագայ թագաւորներին ոչինչ չէր մնում անելու, բացի ազգերուց իւրեանց պատաների խօսքերում։ իւրեանց անձն զնացան զուարձութիւններին տալով։ Այզպէս կներկայացնէին Ասորեստանի պատմութիւնը և նինոսին, մինչեւ որ ասորեստանէկան պալատների աւե-

րակների միջից սեպաձև արձանագրութիւններ գտան։ Այս բուն յիշատակարաններից, որոնք անվիճելի պաշտօնական բնաւորութիւն ունին, երեցաւ որ նոյն ինքն Ասորեստանցիներ չէին իմանում՝ Նինոս թագաւորին, թէ նորա ունեին Բէլ—Նէրսուտէ և Բէլտէտէ որդի Նինոս աստուած։ և թէ նորա Խորհրդաւոր նշան էր եղը մարդի զլխով։ (Տես G. Raulinson The five great Monarchies, 1871, հ. I. եր. 131—134)։ Նէ ակկադերէն կնշանակէ պարունակութիւնը որին Միջազգետքի սեմական բնակիչների լեզուով կհամապատասխանէ Բար միեւնոյն նշանակութեամբ։ Նորա ամրողջ անունը կը զրվի այնպիսի նշաններով, որոնք Adar կարդացվին նմանաձևութեան կանոնով։ Խոկ արտաքերական—Nin—իր որը ակկադերէն կնշանակէ նէ առանձու այսինքն ոյն, որի առանձ Տէր է։ Արտաքերական ձեռվ զրված Սեմական ամրողջ անունը զեռ ևս չէ գտնվում։ յիշատակարանների մէջ, բայց նա պէտք է լինի Bar—shem եղած, որը միեւնոյն բան կնշանակէ այսինքն Քար անունով, որի առանձ Տէր է։ Այդ ձեռվ կզանվի հայկական քանի մի մատենազիւնների մէջ։ Այս Քարշամին իւր բազմաթիւ քաջութիւնների համար Ասորեստանցիներ աստուածների կարգ կդասէին և կպաշտէին նորան երկար ժամանակ։ կասէ Խորենացին (զիրք Ա. զլ. ԺՊ)։ Դարձեալ նորա մէջ ուրիշ տեղ ևս (զիրք Բ. զլ. ԺՊ)։ «Ինքն իջանէ ի Միջազգետս, և գտեալ անդ զբարշամինայ զգատկերն, զոր ի փղոսկրոյ և ի բետեղէ կազմեալ էր արծաթով, հրամայէ տանել կանգնել յաւանին Թորդան։ Այս արձանի մասին կասէ նաև Ագաթանգեղոս (եր. 585 Հայկ. Հրատ.) միայն Քարշամինայ անունը մի փոքր փոփոխելով։

Եթէ մինչև անդամ Նինոսի Քարշամինայի հետ միեւնոյն լինելը ապացուցված չընդունենք, այնու ամենայնիւ մենք այստեղ ունինք երկու աստուածութիւն ասորեստաննեկան և ասորական, որոնք վերջին ժամանակի աւանդութիւնների մէջ փառաւոր յաղթութիւնների և քաջութեան ազգային հերոսներն էին դարձած։ Ուրեմն վերջը նոցա ազգային աւանդութիւնների մէջ յայտնի անցքերի մէջ իրրե զործող անձներն տեսնելով, մենք չպէտք է նոցա պատմական նշանակութիւն տանք խիստ մոքով։ Նինոսի մասին մենք զեռ ևս պիտի խօսենք «Ճամփրամի մասին հայկական աւանդութիւններ» վերնագրով զլխում։ Դառնանք այժմ զէպի այն թէ ինչ կասէ Խորենացին Նինոսի ժամանակակից Արամի մասին, որը Կտեղիսոսի հաշուով Քրիստոսի ծննդից 2000 տարի առաջ էր, այսինքն այնպիսի դարում, երբ ոշ թէ միայն Ասորեստանի թագաւորներ, այլ և մինչև անդամ քրմադետներ patesi չկային։

Խորենացին բացատրելով Արամի կեանքից առած զէպերը, կասէ, Արամը սկսաւ թագաւորել Նինոսի Ասորեստանի գահը բարձրանալուց մի քանի տարի առաջ։ Իմանալով որ Մարտաստանցիներ 50.000 զօրքով Նէրտէր Մադէսի առաջնորդութեամբ յարձակվել են և նուածելեն Հայաստանի արևելեան սահմանները Արամը իւր քաջ զօրքով նոցա զէմ գնաց և ջարդեց նոցա։ Մոդէս անուանված Նէրտէր գերի բոնեց, և նորա ձա-

կատը մեխել տուաւ Արմաւիրի բարձր աշտարակի վերայ, Նորա հողերը մինչև Զարասպ սարը հարկազրվեցան հպատակել Հովհերին և հարկ վճարել նոցա:

Վերջապէս Նինոսը՝ Նինուեում թագաւորելով և յիշելով իւր նախահպայր Բէլի և Լայիկի մէջ եղած թշնամութիւնը, յար նար դէպքին կըսպասէր նորա սերունդների ցեղը ոչնչացնելու, Բայց վախենալով որ իւր տերութիւնը տառանվի, նա Արամին իւր Երևան անուանեց, իրաւունք տալով նորան մարգարտեայ վարսակալ կրելու:

Արծիք չկայ, որ Հայաստանում Արամի քաջութիւնների մասին աւանդութիւններ կային, բայց յայտնի չէ թէ արդեօք Նորա կվերաբերվէին Նինոսի թագաւորութեան և ժամանակներին Կտեղիոսի մէջ (Դեռդ. II. 2) մի բան կայ, որը Խորենացու Նինոսի Արամի հետ ունեցած արաբերութիւնների մասին ասածի նման է, Նինոսը, Բարեկըն նուաճելով, Հայերի դէմ գնաց և մի քանի քաղաքներ կողոպտեց, որը երկիւղ ձգեց բնակիչների վերայ, Այս երկրի թագաւոր Բարձրակը չկարողանալով զիմազրել, նորա առաջ գուրս եկաւ ընծաներով և յայտնեց իւր հնազանդութիւնը, Նինոսը նորան վեհանձնութեամբ ընդունեց և միայն օգնական զօրք պահանջեց, Այս ձեռվ Նինոսի Բարդանէսի հետ ունեցած պատերազմի մասին պատմութիւնը բոլորովին համաձայն է նորան, ինչ որ Նինոսը հին պատմութիւնների մէջ կներկայանայ:

Մար—Արամն այս Բարդանէսի տեղ ժողովրդական աւանդութիւնների մէջ Արամին կվերցնէ, որտեղ ազգային ինքնասիրութիւնը, շատ հաւաքան է, չէր կարօղ իւր հերոսին շափազանց նուաստ դրութիւն տալ անգութ զրացու վերաբերմամբ, Սակայն նոյն ինքն ժողովածուի մէջ կերեի աշխատութիւն համաձայնեցնելու Արամի մասին ասվածը Նինոսի աշխարհակալութեան մասին յայտնի եղածի հետո: Հեղինակի այս ձգտութեան ահա համաձայնեցնելու Ասորեստանի պատմութեանը այսինքն Կտեղիոսի պատմանների հետ (Դրոգորոսի և Եւսեբոսի համաձայն) ժողովազին բաւական շիոթեցրած է, աշխարհակալ Արամը երևացել է զրացի և ժամանակակից միւս աւելի յայտնի աշխարհակալին, Երկու աշխարհակալները զրացի թագաւորութիւնների մէջ չէին կարող առանց պատերազմի մնալ, և յաղթութիւնը պիսի Նինոսին մնար, որին ինքն հեղինակը բռն աշխարհակալ կհամարէր, Ենչպէս հեռացնելու էր այս պատերազմը, Ակզրում հեղինակը պարզ միջոցն է կղմէ: Նա կսափէ Արամին զահը բարձրանալ հնառէց դ ունէ ուրէ ուրէ կու և այս ժամանակամիջոցում Արամ կկարողանայ կատարել իւր քաջութիւնների մի մասը և տիրել Մարտատանին, բայց ոչ բոլորին, այլ նորա մի մասին մինչև Զարասպ սարը և ոյն ևս մինչև Նինոսի թագաւորութիւնը, որովհետեւ Կտեղիոսից յայտնի էր, որ Նինոսը նուաճեց ամբողջ Մարտատանը, Վերջապէս Նինոսը կթագաւորէ և պատերազմ՝ անխոռափելի կդառնայ, Այսեղ հեղինակները օգուտ կքաղեն այն դէպքից, որը մենք վերե Կտեղիոսից յառաջ բե-

բինք, բայց այնպէս չեն պատմում, ինչպէս որ կդժնվի Անխփի Բժշկի մէջ, բայց աւելի ազգային բնքնասիրութեան սգով. Նիսասը, չկամնալով իւր թագու որութիւնը վտանգին ենթարկել, նորան իւր Երիտր կանուանէ և թոյլ կտայ նորան մարգարտեայ վարսակալ կրելու, Լաւ աշխարհակալ է, որ իրաւոնք չունի վարսակալ կրելու, զոնէ մարգարտեայ . . . .

Զնայիլով սորտն, աւանդութիւննեղը ազգել են իւրեանց ճնշումն չեղի-  
նակի վիրայ, և նա Նինոսին չիշելով, կնարապրէ Արամի յաղթութիւն-  
ները Ըստրեստանում և Ասորեստանի զաշտերի Հայաստանի հեռ միանալի  
Պատերազմը ոչ թէ Նինոսի այլ Բարշամինայիր գէմ կլինի, թէ և Նինո-  
սի կմագաւորէր:

Հայերը Մարտաստանցիներին Մ-ը էր կանուանեն, որոնց Մադէս առաջնորդի հետ պատերազմ կմղէր Արամը, ԱԵՆք կեարծենք, որ Մադէս անունով առանցութիւնը Մարտաստանցիների ընդհանուր անունը կանձնաւ որէր (Ա. զբքի մէջ Մադայ. Անգամ Mada). Ասկայն կարիքի է որ այս պատերազմի պատճեն թիւնների մէջ առանցութիւնը պահպանած է իսկական պատճեն կան անցքի միշտակը, այսինքն Սկիւթացիների որշաւանքը Հոյաստան և Մարտաստան կիաքսուրի օրով ։ Յայտնի է, որ այս Սկիւթացիների կամ Սակերի առաջնորդը Մադէս Madyes (Herod. 1, 103) կամ Madys էր (Strab. I' 61).

Հետեւալ զիլսում Խորենացին կշարունակել է նոյն այս Արամ՝ յետ վճարելոյ Տակապյեն որ բնդ արեւելեայս, խաղայ նոյն զօրութեամբ զեղամամբ Ասորեստանի գտանե և անդ զոմն ապականիշ երկրին իւրոյ չարիք բիւրովք վասելովք հետեւակենք և հինգ հազար հեծելազօրու Բարշամանուն յազգէ սկսուիցն որոյ սաստկագոյն նեղեալ հարկաց խոտութեամբ անսպաս զբավանդակ շրջակայն իւր առներ Ամա Տակառու պատերազմի ի վիմի հարեալ Արամ՝ հաղածական ընդ մէջ Կարուսուց է բաշտն Ասորեստանի ունանէ, զբազումն ի նոցանէ սատակելով իսկ Բարշամ առաջի զինակրացն նորա պատահեալ մեռաւ Եւ զայս Բարշամ վասն արիութեան իւրոյ բազում գործոց առառածացուցեալ պաշտեցին Ասորիք ժամանակս յոլովս Խոկ զմեծ մասն զաշատցն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի Արամ բազում ժամանակօ և Կերեի մէ ի նչ զժուար զրութեան մէջ պրած է իւրեան հեղինակը կամենալով համաձայն լինել ասորեստանեկան յայտնի պատմութեան հետ (Կարենիս)։ Արամը աւանդութիւններին համաձայն պատերազմեց Ասորեստանցիների հետ և յաղթեց նոցաւ Բայց ժողովողը նորան Նինոսի ժամանակակից շինեց որի յաբարերութիւնը զէսի Արամը մեղ արգեն յայտնի է նախընթացից Նինոսի հետ պատերազմելը և նորա յաղթելը անհարելի եղաւ Ի՞նչ կանէ հեղինակը Նա կուղարկէ Արամն Ասորեստան պատերազմելու ոչ մէ Նինոսի որի մասին կլու այլ Բարշամի հետ որը ինչպէս տեսանք միացն Աննոս անունի թարգմանութիւնն է Սակայն Արամը կապտերազմէ շաստուածի և ոչ պատմական անձի հետ Ե յապեսով հայտատանի արք երեան և հարաւային սահմանները աղատ-

զեցան՝ առաջիններն Սիստիեան իշխաններին յանձնվեցան կառավարելու, իսկ երկրորդը՝ նապահան իշխաններին։ Վենոյ ազգատելու արևմտեան մասը Խորեացին կառէ։ Երամբ 40 հազար հոգածակ և 2 հազար հեծելազօրքով կոպայ նապագովկիայ։ այնաեղ որ այժմ Կեսարիայ կանուանին Այստեղ նորան պատահեց Տիտանեան Պայտապիտ—Քաղեայ, որը Սև և Սիցիլիական ծովերի մէջ եղած բոլոր երկիրներին կափրէր։ Պատերազմի մէջ Երամբ կ յաղթէ նորան և Ասիական ծովի կղզիներից մէկի մէջ կփափցնէ։ Նորանից յետոյ Արամբ Հրաման տուաւ իւր նուածած երկիրների բնակիչներին, որ հոյերէն խօսին, իսկ ինքն դարձաւ Հայաստան, յանձնելով այս նահանգի հանավարութիւնը իւր ազգից Մշտի անունով մէկին։ Նա շնորհ փորրիկ քաղաք և իւր անունով Մամակ անուանեց, որ վերջը Կեսարիայ անուանվեցաւ։

Այս աւանդութեան մէջ՝ ըստ ամենայն հաւանականութեան, ոյն անցքի բացատրութիւնը կ'աղջորդվի։ որ գետ ևս նախալատմական ժամանակաւ հայեական ցեղը ապահանցաւ արևմուտք Փաքր Ասիայում մինչև Ելիս<sup>(\*)</sup> գետը թէ Կապագովկիայն երկար ժամանակ փաքր Հայաստանի մոտ կփակմէր և թէ բոլոր այս տեղերում մինչև մեր ժամանակը գործածական լեզու հայեականն էր։

Եթէ ուշք գարձնենք Արամի նուածած բոլոր երկիրներին և ենթադրենք որ նոքա կառարկած են մի թագաւորութեան մէջ, այն ժամանակը պէտքէ ևնթագրենք որ նոցա հիմք պատմական անցք է։ Սորա նմանը կգտնվի իսկապէս Մարաստանի պատմութեան մէջ, ոյսինքն Կիաքսարի թագաւորութեան ժամանակը որը ջարդեց Սկիեթացիներին (Մալէս), առաւ Նինուէն (Բարշամի վերայ արած յաղթութիւնը և Ասորեստանի դաշտերի միանողը) և պատերազմեց Մարաստանի հետ։ Գործը Քրիստոսի ծննդից առաջ է։ դարում կինքի Այստեղ զբաւածք դեր կխաղան ոչ թէ Հայերը, ոյլ Մարաստանցիները։

Քայլ հոյեական պատմութեան մէջ կարեի է զանել մի ոյնպիսի վայրկեան, ոյսինքն այնպիսի թագաւորութիւն, որի ընթացքում Հայաստանի առհմաններն բաւական ընդարձակվեցան զրացիների հողմից։ Աչա ինչ կառէ Սարարծ X. 528-532. Պասեն, որ Հայաստանը մի փաքրիկ թագաւորութիւն լինելով, մեծացաւ Զարիսատիք և Արտաշիսի ժամանակը։ Նոքա առաջ Մեծ Անտիոքի զօրապեաներ Էին, բայց նորան հարուածելուց յետոյ, իւրեանց թագաւոր հրատարակեցին, մէկը Աօֆէնում։ Ակլիուէ նում և Օգոմայեառում, միւսը Արտաշատի մօտ եղած երկիրներում։ Նոքա ժեծացրին իւրեանց կալուածները, յափշտակելով զրացի ազգերից նոցա երկիրների մի մասը, Մարաստանցիներից—Կասպիանէ, Փանունիուս (Փարնէս)։ Կասորուկիզա (Կասպուրական)։ Երկրացիներից—Պարիակեան սարեր, Խորձէն, և Կուրի այն կողմը (?) Գոգարէնէ. Խոլիրներից և Միզինու կնե-

(\*) Հերոդոտոս Հայերին արդէն Ալիս գետի սիւնի մօտ հգանէ (I, 72).

րից — Կարենիսիս (Կարին) և Դեղկուենէ (Դեղջան) փոքր Հայաստանի մաս, Կատաօնցիներից — Մելիտինէ և Անտիտաւրոսի մաս եղած երկիրներ, Առորիներից — Տամոնիսիս (Տարոն), Եւ մենք և այժմ գլուխ է Հերեւն, Մենք էնթմինք մեր վերև բացատրած կարծիքի վերայ,

Արտամից յետոյ Խորենացու մեջ կսկսվի նորա որդի Արագի թագաւորութիւնը, որի մասին պիտի խօսենք Ծամիրամի մասին եղած զիթոււմ,

Արայի որդի Կարգոս, հաւանական է, որ Կարգոս իների, կամ Կարգուների այն տպակի վիպանուն պատի լինի, որոնցից այն երկիրը, որ սկզբում՝ Արարադ կանուանվէր, ստացաւ իւր վերջին ժամանակի անունը,

Կարգոսից յետոյ 29 թագաւոր կնսափ միմեանց յետելից մինչև Պարսկը, որն Ասորեստանի Սարգանապալ թագաւորի, և Մարտաստանի Արբակեսի ժամանակակից էր, Այս անունները մենք վերև յառաջ բերած ենք, Գրեթէ նորա ամենքն ես որ և է նշանակութիւն ունին պյժմեան հայկական լեզուով, մինչեռ առաջին 10—12 անունը անկարելի է բացատրել այս լեզուով, Այս թագաւորները ոչինչ նշանաւոր բան արած չեն, և հեղինակը նոցա յառաջ կրերէ, որպէս զի մինչև Պարսկը պարապ տեղ բըռնեն, Մենք կկարծենք մինչև անդամ, որ նորա հին աւանդութիւնների մեջ չկային, այլ միայն Խորենացու աղբիւրն է աւելացրած,

Սերենը կասէ (եր. 6). «Յայնժամ տիրեաց Ծամիրամ ի վերայ երկրին Ասորեստանիաց, և յայնմհետէ Ասորեստաննեալց թագաւորքն տիրեցին մինչև ցմեռանելն Սենեքերիմայ, ապա ապստամբեցին յասորւոց թագաւորացն ծառայութենէ, Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոց Արամինակայ, այբ զօրաւոր և կարովի աղեղամիք, ապա Արմոց ապա Սարհանգ ապա Ծաւաշ, ապա Փառնաւազ».

Այս Փառնաւազ հնագանեալ նարուգոյոն սոսորայ արթայ ի Բարելոն, Եւ ապա յայնմհետէ Բարելացւոց և Մարտից թագաւորքն տիրեցին մինչև ցնդէքսանդր Մակեղոնացի ».

Մինչև պյժմ մենք քննեցինք Հայաստանի հին պատմութեան բովանդակութիւնը և կազմութիւնը, Քննենք նորան պյժմ մի փոքր այն ձեւի վերաբերմամբ, որը նա ստացած է Խորենացու և Մար—Արասի տուած շարադրութենից, Մեր յօդուածի Բ. զիխում մենք արդէն ասացինք նոյնապէս այն մասին, թէ Մար—Արասը, կամ նա, ով որ այս անունի տակ իւրեան կծածկէր Հայաստանի պատմութեան մասին եղած իւր տեղեկութիւնները քաղած է ոչ թէ նինուէի դիւններից, այլ ժողովրդական երգից, Մարաստանի և Ասորեստանի պատմութեան վերաբերեալ բոլոր մեացածը նա ուղղակի Եւսեբեոսի ժամանակագրութենից է փոխ առած, Եւսեբեոսն ես մեզ կհաղորդէ մինչև մեր ժամանակը մատենագիրներից ամրողապէս շհասած հատուածները, նոյնպէս և Դիոլորոսից, որը Ասորեստանի պատմութիւնը պարզաբանած է Կաեզիոսի համաձայն, Այսպիսով Մար—Արասի հաւատացնելը, թէ նա նինուէի դիւններում գտաւ մի զիբ, որը թագմանված է Աղեքսանդրի հրամանով քաղցիէրենից

յունարկն, հետեւ մակաբերութիւն՝ կստանայ. Խորենացին տառ առ տառ արտազրած է Մար—Արասից Ասորեստանի և Մարաստանի պատմութիւնը. Մար—Արասն ևս Եւսեբէոսի ժամանակազրութենից և կամ բոլորովին նորա նման ժամանակազրութենից. Եւսեբէոսոր, չթաղցելով այս, քաղած է Գիոդորոսից և միւսներից, իսկ Գիոդորոսը Կտեղիոսից. Աշա ինչի Խորենացու մեջ հազորգածը Մարաստանի և Ասորեստանի պատմութեան վերաբերմամբ. Մար—Արասի համաձայն, տառ առ տառ նման է սորա մասին Եւսեբէոսի ասածին ևս, Գիազորոսի համաձայն, Շատ աշխատութիւն պէտք չէ բազգատելու մի պատմէի միւսից փոխառածները միեւանց հետ, և իւր ասածի մասին համոզվել. Իսկ մենք աշխատելու ենք ցաց տալ, մէկ Խորենացու զիրքը. Հայկական պատմութեան փաստերի շարայրութեան կողմից սերունդների թագաւորութիւնների յաջորդութեան և տեղորութեան կողմից ևայլու զրված է Կտեղիոսի ասորեստանեկան պատմութեան համաձայն այն ձեռվ, ինչպէս որ պահպանված է նա Եւսեբէոսի մէջ:

Քաղդատենք նդյն ինքն փաստերը. ըստ Եւսեբէոսի Արքութենոսից, (Chronica, եր. 38) առասպելական թագաւորների ծննդարանութիւնը մինչև Նինոսը հետեւ եան է. Բէլ, Բարե, Անկր, Արքէլ, Խալ, Արքէլ, Խալ, Արքէլ, Նինոս, Ընդ ամենը հօթն անձն.

Խորենացու պատմութեան մէջ Բէլի ժամանակակից Հայկից մինչև Նինոսի ժամանակակից Արամը, Նշնապէս եօթն ցեղազետներ կան. Հայկ, Արմենակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմայ, Արամ, Նինոս աշխարհակալին, ինչպէս տեսանք, հակադասված է Արամ աշխարհակալը.

Նինոսից յետոյ կթագաւորէ անառակ կին Շամիրամը, որի ժամանակակից Մար—Արասը Հայաստանում կդնէ ողջախոհ Արայ թագաւորին.

Այնուհետև Եսորեստանում կյաջորդեն մին միւսին 30 թագաւոր \*), որոնք ոչինչ մեծագործութիւններով չեն հաշակված. Նդյնպէս կտառմն,

(\*) Այս ցուցակը կրովակի կրովակակէ էւր մէջ, 0պպէրտի սրամիս նկատողութեան հոմանայն, ոչ թէ անձների անունները. աղջ Միջագետքի այն մայրաքաղաքների անունները. սրոնց մէջ աստիճանաբար կենդրուանար բարձր իշխանութիւնը, անցնելով Հարտիկ դէպի հիւսիս. Բէլը ամբողջ Միջագետքի բարձր աստուածութեան անունն է: Բար Բարելոնի վիպանուն է—Բար—իլու: Աճէր—Նինոս: Խալ—Շալախ: Արքէլ—Արքէլա: Նինոս—Նինուէ—Նինուա: Տես F. Lenormant, La légende de Sémiramis, 1873, եր. 18: Արքէլ անունը ցուցակի մէջ երկու անգամ կրկնված է Խորա համար, որ Քամից մինչեւ Նինոսը սերունդների թիւը հաւատարվէի Սեմից մինչեւ Արքահամ եղած սերունդների թուբին: Նդյն Նաբատոկով. այսինքն որպէս զի ստանանք 11 սերունդ Բարեթից մինչեւ Արամ, ժողովովները դամերի եւ Թորոսի մէջ գրած են Թիրաս: Խորենացին Հնկատելով այս արհեստականութիւնը Նորի երեք որդիների սերունդների ժողովելու մասին, այս տեղում (Գիրք Ա. գլ. Ե.) միամտաքար կտաղակէ, «իսկ ու» ով ուշիմ ընթերցանէրդ. Հայեաց աստանօր Ընդ հաստատութիւն կարգի երից ազգացդ մինչեւ ցԱբրահամը ցՆինոս եւ ցԱրամ, եւ զարմացիր: ո

թէ Հայաստանում Արամից յետոյ միջև Սարգանապաղի ժամանակակիցից ուրբարը եղած են 30 թագաւոր, որոնք ոչինչ լանով նշանաւոր չեղան:

Սակայն Նինիասից յետոյ Ասորեստանի քսաներորդ թագաւոր Տեղամուս Պրիամոսին օգնութիւն կռւղարկէ Եթովպեան զօրքը Մկհանէ առաջնորդութեամբ, որը Թեսալացիներից սպանվեցաւ, Խորենացին սորան համեմատ կառէ, թէ Տեղամուսը Եթովպեան զօրքով ուղարկեց նոյնողեւ Արայից յետոյ Հայկական քսանմիներորդ թագաւոր Զարայրին, որին Տրայական պատերազմի մէջ քաջ Տեղենները սպանեցին:

Ասորեստանի Լ.րգ Սարգանապալ թագաւորի օրով Նինուէն կկործանվի Մարաստանցի Արբակեսի ձեռով, Եթէ դառնանք Խորենացու պատմութեամբ, այնտեղ ես կտեսնենք, որ Հայկական Լ. թագաւոր Պարուրի օրով, Նինուէն Հարկազրված էր Հոգատակելու Արբակեսին, որը իշնորհակալութիւն Պարուրի ցոյց տաւած ծառայութեան, թշլ կտոյ նորան թագաւորական տիտղոս կրելու:

Ուստի եթէ մենք Ասորեստանի թագաւորների անունների ցուցակը Համատենք Խորենացու մէջ գտնված Հայկական թագաւորների միւնոյն ցուցակի հետ այն ժամանակը կտեսնենք, որ վերջիններս չատ անգամ առաջիններին նմանութեամբ են ստեղծված: Այսպէս օրինակ, Անուշաւանը Խորենացու մէջ Աւականուանվի: Բայց միւնոյն ժամանակը Խորենացին նորա ժամանակակիցին կանուանէ Ասորեստանի Սոսարիս թաղաւոր:

Եթուոյ, Հայկակի ժամանակակից անուանված է Քերեսու, Եթէ մենք երկու անունի մէջ վերջաւորութիւններ ձգենք, ստանալու հնք Հայկ ժամանակակից Բէլէ մեզ յայտնի անունները:

Մէրբեռն - Հըւառէ կամ Հըւառէ ժամանակակից է, Երկու անունն եօ ծագած են այն բառերից, որոնք պարսկերէն և Հայերէն կրոկ կնշանակեն:

Սովորմոս Համաձայնեցրած է Ծաւարշի հետ, և լու Այսպէս Կտեղիսի Ասորեստանեկան կարծված պատմութեան զբեմէ Քոլոր Փաստերը կը կնքին Հայկական պատմութեան մէջ այն փոփոխութիւններով, որոնց կապահանցէին Հայկական պատմութեան ուրիշ Հանգամանքները:

Ա. Տ. Գ.

### ԵՐՐԱԲՐԴԻ ՓԻՒՆՏԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. (149—146 թ.)

(Ա. Կիշին տետրակում Միջին դարերից մի յօդուած Հրատարակելով, այժմ մեր խօստման համաձայն Հին պատմութենից Ճեմարանի Գ. զառարանի աշակերտ Մ. Դահապեղեանի զրաւոր ողատառիւնը կզետեղենք առանց սրբազրելու): Խաչ:

Հռոմը արդէն Համարեա բոլոր Հին պատմական աշխարհին տէր պարձած էր, միայն հզօր Ասպետուղէնն էր աղատ միացել: Թէղէտ Կարթազէնը